


# **ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
(2017-2022թթ.)**



Հաստատված է  
Ավանդական բժշկության համալսարանի  
«13» մայիսի 2017թ. Գիտական խորհրդի նիստում  
Գիտական խորհրդի նախագահ,

Ռեկտոր \_\_\_\_\_ Ն.Ն.Սարիբեկյան



**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
(2017-2022)**

Ռազմավարական ծրագիրը ներառում է համալսարանի ողջ գործունեությունը, իրականացման անհրաժեշտ քայլերը կրթության բարեփոխումների ոլորտում ապահովելով կրթության բարձր որակ և մրցունակություն միջազգային ասպարեզում:

Ծրագիրը հնարավորություն է տալիս կուտակած փորձի, ժամանակակից մարտահրավերների և բարեփոխումների հիման վրա արդյունավետ կազմակերպել իր գործունեության ներկան, նախաձեռնել համալսարանի առավել նպաստավոր և մրցունակ ապագան, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս՝ բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ .....	4
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ .....	4
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ .....	5
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ .....	9
1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ .....	9
2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ .....	11
3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ .....	14
4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	16
5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ .....	17
6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ .....	19
7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ .....	21

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Ավանդական բժշկության համալսարանը բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության առաջատար կրթօջախ է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության ազգային և տարածաշրջանային եզակի և նախադեպը չունեցող, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկների պատրաստմանը:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԱԿԱՆԸ**

Ավանդական բժշկության համալսարանը (այսուհետև՝ Համալսարան կամ ԱԲՀ) ձգտում է դառնալ հաստատություն, որն

- առաջարկում է կրթական, գաղափարային, հետազոտական առաջանցիկ ու մատուցվող բժշկական կրթական ծրագրեր, որոնք համահունչ են ժամանակակից բժշկական կրթության միջազգային կրթական սկզբունքներին,
- ունի գործուն և արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառուցվածք, ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսումնական և լաբորատոր բազա, որը նպաստում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը,
- կապահովի ապագա ազգային, բանիմաց և բարձր բարոյականությամբ օժտված այնպիսի բժիշկների պատրաստմանը, ովքեր ամբողջովին կգիտակցեն իրենց դերը բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ,
- կլինի հասանելի, մատչելի և նախընտրելի ուսումնական հաստատություն հասարակության ամենատարբեր շերտերի համար, անկախ տարիքից, սեռից, ռասայական ու ազգային պատկանելությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից,
- առաջարկվող կրթական ծրագրերը համապատասխանեցնել եվրոպական բժշկական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին, ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման առանձնահատուկ մոտեցումներով,
- սեփական հնարավորությունների ներդրմամբ ժամանակակից պահանջներին համապատասխան բժշկական գիտակրթական ծրագրերի ապահովում,
- կհանդիսանա տարածաշրջանում նոր որակի բժշկական կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման բարձր մակարդակի կրթական ծառայություններ մատուցող հաստատություն,
- կրթությունը և գիտական հետազոտությունը խթանելու համար ունակ կլինի իրականացնելու զարգացման համակարգված ռազմավարություն:

## **ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

21-րդ դարի նախաշեմին բժշկական կրթությունը, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում բախվում է նոր հրամայականների, որն էլ պայմանավորված է կրթության ոլորտում առկա հիմնախնդիրներով: Բժշկական կրթությունը հատկապես կարևորվում է գլոբալ կրթական բարեփոխումների և կրթական միասնական դաշտի ստեղծման առումով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԱՀԿ) 2002թ.-ին հռչակել է ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման ռազմավարական ուղիները որպես XXI դարի քաղաքականություն: Ըստ ԱՀԿ-ի ռազմավարության, անդամ պետությունների ազգային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի մի շարք խնդիրների լուծմանը, այդ թվում նաև հանրային պահանջարկ ունեցող ավանդական բժշկության համապատասխան մասնագետների պատրաստմանը և որակավորմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, ֆինանսական և այլ միջոցների հատկացմանը:

Այսօր Հայաստանում արդիական են բժշկական կրթության համակարգի բարեփոխումները, և որքան շուտ սկսենք բարեփոխումների գործնական իրականացումը, այնքան արագ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի բժշկական կրթության համակարգն արժանի կերպով միացել է համաշխարհային կրթական համակարգին: Յուրաքանչյուր բուհի բնութագրական առանձնահատկությունը որոշվում է այն արժեքներով, որոնց դավանում են նրա շահակիցները: Հայաստանի ավանդական բժշկության համալսարանի համար այդ արժեքները այն հիմնարար սկզբունքներն են, որոնք դրված են նրա գործունեության հիմքում:

### **1. Կրթական բարեփոխումներ՝ կրեդիտային համակարգի ներդրում**

Այսօր, որպես նպատակային դրույթ, դիտարկվում է բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների եվրոպական տարածքի ստեղծումը:

Այդ նպատակով ԱԲՀ-ում ուսումնասիրվել, վերանայվել և մշակվել են իրավական, նորմատիվ ու մեթոդական փաստաթղթերը: Բարեփոխումները սահուն իրականացնելու նպատակով մշակվել են կրեդիտային համակարգին համապատասխան նոր ուսումնական պլաններ, ինչպես նաև կրեդիտների կուտակման հիման վրա ուսանողների փոխադրման, հեռացման և վերականգնման կանոնակարգեր:

Համալսարանն հավատարիմ է իր ավանդույթների և արժեքների շարունակելիությանը: Գործունեության ընթացքում համալսարանը հետևել է մի հիմնական ուղղության. շրջանավարտներին սովորեցնել բժշկական կրթության և ավանդական բժշկության հմտությունների տեսությունը, մեթոդիկան և գործնական կիրառումների միջոցով հասնել կայուն հաջողության, ձեռք բերել ճանաչում ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Համալսարանը անընդհատ ընդլայնելով իր մասնագիտական ուղղությունները, ընդգրկում է նոր կրթական միջոցներ, որոնք կպահպանեն և կզարգացնեն այս խնդիրը:

## 2. Համալսարանի ներկա վիճակը

Համալսարանում ներկայումս գործում են երկու ֆակուլտետներ՝ բուժական և ստոմատոլոգիական: Ուսումնառության ձևը ցերեկային է, մեկ հերթով:

Կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ռեկտորատ, գիտխորհուրդ, որակի ապահովման հանձնաժողով, որակի ապահովման բաժին, բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներ, ուսումնական մաս, գիտական մաս, արտաքին կապերի բաժին, մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժին, գիտաբժշկական ուսումնական կենտրոն, գրադարան, ընթերցարան, հաշվապահություն, տնտեսական մաս, մասնագիտական ամբիոններ՝

- հումանիտար և սոցիալ-տնտեսական առարկաների,
- բնագիտական առարկաների,
- բժշկակենսաբանական առարկաների,
- ընդհանուր և մասնավոր թերապևտիկ առարկաների,
- ընդհանուր և մասնավոր վիրաբուժական առարկաների,
- հատուկ և մասնագիտական և կլինիկական առարկաների,
- Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության,
- ստոմատոլոգիայի:

Նշված վարչական և ուսումնասօժանող ստորաբաժանումներն ունեն իրենց կանոնադրությունները, կանոնակարգերը, աշխատանքային պլանները, ինչպես նաև համալսարանում տարվող աշխատանքների համար պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

Համալսարանը հանրապետության այն եզակի ոչ պետական ուսումնական հաստատություններից մեկն է, որն իր գործունեության 21 տարիների ընթացքում զգալի նվաճումներ է ունեցել սեփական նյութատեխնիկական բազան ստեղծելու գործում:

Համալսարանի զարգացման կարճ պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի վերջին տասնամյակը: Այդ ժամանակահատվածը, չնայած անցումային շրջանին բնորոշ լուրջ դժվարություններին, համալսարանի համար եղել է ուսումնական գործընթացի պահպանման, բարեփոխումների, տեխնիկական հագեցվածության և միջազգային համագործակցության ընդլայնման ժամանակաշրջան:

Համալսարանի ուսումնական, լաբորատոր և գործնական աշխատանքներն իրականացնելու նպատակով օգտագործվում են հիմնականում սեփական միջոցները, ինչպես նաև վարձակալված կլինիկաները, լաբորատորիաները և գիտահետազոտական բազաները:

Կլինիկական առարկաների դասընթացներն անցկացվում են Երևան քաղաքի առաջնակարգ թվով 8 վարձակալված կլինիկական բազաներում, որտեղ տեղակայված են կլինիկական մասնագիտական ամբիոնները, որոնք ապահովված են լսարաններով, կաբինետներով և հիվանդասենյակներով, ուսումնական դիդակտիկ պարագաներով, ժամանակակից սարքավորումներով:

1999թ.-ից սկսվել են համալսարանի 5000 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով, 50 մահճակալանոց բազմապրոֆիլ «Գիտաբժշկական կլինիկայի» կառուցման աշխատանքները, որի նպատակն է բարելավել համալսարանի սեփական ուսումնական

բազան, որը միաժամանակ կնպաստի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կատարմանը: Ֆինանսական միջոցների անբավարար լինելու պատճառով, շինարարական աշխատանքները ժամանակավորապես ընդհատվել են: Կատարվում է ուսումնական մասնաշենքի, լսարանների, կաբինետների և լաբորատորիաների արդիականացում և վերանորոգում:

### **3. Կառավարման համակարգ**

Բուհի կառավարումն իրականացվում է համալիր ձևով, որի արդյունավետության բարձրացմանն են ուղղված համալսարանի ստորաբաժանումների աշխատանքները: Համալսարանի կառավարման համակարգը նախորդ տարիներին ապահովել է բուհի զարգացման կայունությունը, երաշխավորել է բարեհաջող իրականացնել նախկինում ընդունված ռազմավարական զարգացման ծրագրերը: Անցած տարիներին համալսարանի կառավարման համակարգի հիմնական ուղղություններ են եղել՝

- կրթական և ուսումնական ծրագրերը,
- գիտական գործունեության զարգացումը,
- ուսանողների ընդունելությունը,
- որակի ապահովումը,
- ֆինանսների կառավարումը,
- կյանքատեխնիկական բազաները,
- ստորաբաժանումների աշխատանքների բարելավումը:

### **4. Կրթական գործունեություն**

Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և իր ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառնությամբ, տրամադրում է տարատեսակ խորհրդատվական և ֆինանսական աջակցություն: Համալսարանը համագործակցում է մի շարք հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների հետ: Համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար մշտադիտարկվում են և իրականացվում անհրաժեշտ բարելավում: Մշակվում են համապատասխան ուսումնամեթոդական ծրագրեր և ընթացակարգեր:

Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ: Ներկայումս մշակվում են ՄԿԾ-ների ուղեցույց և առարկայական դասընթացների ծրագրերն ու նկարագրերը:

### **5. Գիտահետազոտական գործունեություն**

Գիտական հետազոտությունները հիմնականում նպատակաուղղված են համալսարանի ռազմավարության նպատակների և խնդիրների իրականացմանը:

Համալսարանի գիտամանկավարժական փորձը 1998թ. Կիպրոսում կազմակերպված միջազգային կոնֆերանսում լավագույնս արժևորվեց և այն գնահատվեց որպես ինտեգրատիվ բժշկության մասնագետներ պատրաստելու առաջին և առաջավոր փորձ:

Պարբերաբար կազմակերպվում են հանրապետական, միջազգային և ներքուհական գիտաժողովներ, սեմինարներ: Տպագրված տեսական և գործնական նշանակություն ունեցող գիտական աշխատանքներից շատերը ներդրվել են գործնական բժշկության մեջ:

Վերականգնվել և ծրագրերում են ընդգրկվել ախտորոշման և բուժման ավանդական մեթոդները՝ շեշտը դնելով բուժման ինտեգրատիվ մոտեցման վրա /ինտեգրելով ավանդական և ժամանակակից մեթոդները/:

Մշակվել և վերամշակվում են ավանդական բժշկության կրթական ծրագրեր և ավանդական ու ժամանակակից բժշկության ինտեգրման առարկայական ծրագրեր:

«Ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ բ.գ.թ. Է. Մինասյանի կողմից մշակված հիվանդությունների ախտորոշման, համալիր բուժման, դեղաբույսերի և դեղամիջոցների անհատական ընտրության ինքնատիպ մեթոդը, ըստ ժամանակակից և արևելյան ավանդական բժշկության, ՀՀ կառավարությանն առընթեր Արտոնագրային վարչությունը ճանաչել է որպես գյուտ և ստացել հեղինակային իրավունք:

Իրականացվում է համալսարանի գիտահետազոտական գործունեության հետագա կատարելագործում:

### **6. Կադրային ներուժի զարգացում**

Համալսարանի կադրային ներուժը հիմնականում համապատասխանում է լիցենզիայի պահանջներին: Կրթական ծրագրերի իրականացման գործընթացում ընդգրկված են ոչ միայն հանրապետության բարձր վարկանիշ ունեցող մասնագետները, այլ նաև համալսարանի շրջանավարտները: Համալսարանի դասախոսական կազմը համալրված է մեծ մասամբ հիմնական կադրերով, որոնց ընտրությունը կատարվում է գիտխորհրդի անդամների և ռեկտորի առաջարկությամբ: Դասախոսների ընտրության հարցում մեծ տեղ է տրվում բանիմաց մասնագետներին:

### **7. Ուսուցման որակ՝ եվրոպական չափանիշով**

Ուսուցման որակը շարունակում է մնալ համալսարանի հիմնական նախապատվությունը: Ուսուցման որակի ապահովման համար ձգտում է ինտեգրվել Եվրոպական բարձրագույն կրթական տարածք, ուստի մեզ համար ուղենիշ են կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշները: Այդ նպատակով համալսարանում կրթության որակի ապահովման և գնահատման համար գործում է որակի ապահովման բաժինը:





**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ**

**1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

<b>Բարձրացնել կատարելագործել</b>	<b>կառավարման վարչարարությունը</b>	<b>արդյունավետությունը</b>	<b>և</b>
----------------------------------	------------------------------------	----------------------------	----------

**Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և գործառույթների արդյունավետ ու հստակ գործառույթուն:**  
**Ոազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Վերանայել ստորաբաժանումների կանոնակարգերը, վերհանել թերությունները և բացթողումները:
2. Հստակեցնել աշխատակիցների գործառույթները, լիազորությունները ու պարտականությունները:
3. Արդի պահանջներին համապատասխան լրամշակել ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերը և կանոնակարգերը:
4. Ապահովել համալսարանի կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների հրապարակայնությունը, հասանելիությունը և մատչելիությունը բոլոր շահառուների համար:
5. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն՝ ուղղված ստորաբաժանումների համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Ստորաբաժանումների վերանայված և լրամշակված կանոնակարգեր:
2. Աշխատակիցների հստակեցված գործառույթներ, լիազորություններ ու պարտականություններ:
3. Ուսումնական գործընթացը կարգավորող վերանայված փաստաթղթեր և կանոնակարգեր:
4. Կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների առկայություն համալսարանի պաշտոնական կայքում:
5. Շահակիցներին բավարարող մարդկային ռեսուրսների կառավարման մշակված և հաստատված քաղաքականություն:

**Խնդիր 1.2. Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ կառավարման տեղեկատվական վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:**

**Ոազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Ստեղծել համալսարանի կառավարման միասնականացված տեղեկատվական համակարգ:
2. Չարգացնել համալսարանի տեղեկատվական համակարգերը, ընդլայնել կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում:

3. Շարունակել ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ համալսարանի կառավարման ոլորտում:
4. Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի առկայություն:
2. Համալսարանի կատարելագործված տեղեկատվական համակարգ:
3. Համալսարանի կառավարման ոլորտում գործող արդիական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:
4. Կառավարման բոլոր մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ավելացում:

## 2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԱԲՀ-ում ստացած կրթությունից

**Խնդիր 2.1. Վերանայել կրթական գործող ծրագրերը համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին:**

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. ՄԿԾ-ները, ուսումնական ծրագրերը, պլանները մշտադիտարկել, վերանայել, կատարելագործել, հանրապետական և միջազգային առաջադեմ փորձի կիրառմամբ:
2. Շարունակել կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթաց՝ Բոլոնիայի և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին և ազգային ավանդույթներին:
3. Բարելավել դասավանդվող բոլոր առարկայական դասընթացների նկարագրերը:
4. Կատարելագործել ՄԿԾ-ների ուսումնաարտադրական պրակտիկայի ձևերը՝ դարձնելով ավելի արդյունավետ և նպատակային:
5. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:
6. Վերամշակել ուսումնամեթոդական փաթեթները և նրանցում առկա առարկայական ծրագրերի նպատակը, խնդիրները և թեմատիկ բովանդակությունը:
7. Իրականացնել մշտադիտարկում առարկաների դասավանդման արդյունավետությունը բացահայտելու նպատակով ուսանողների և շրջանավարտների շրջանում:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Վերանայված, լրամշակված և հաստատված ՄԿԾ-ներ, ուսումնական ծրագրեր և պլաններ:
2. ՄԿԾ համապատասխանություն ԵԲԿՏ հիմնարան սկզբունքներին:
3. Վերանայված և հաստատված առարկայական դասընթացների նկարագրեր:
4. Վերանայված պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ:
5. Հաստատված դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ:
6. ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրեր:
7. Արտաքին շահակիցների կարծիքներ ՄԿԾ մշտադիտարկման վերաբերյալ:

**Խնդիր 2.2. Ապահովել կրեդիտային համակարգի ներդրում կրթական ծրագրերում:**

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Վերանայել կրթական ծրագրերի բեռնվածությունն ըստ մասնագիտությունների, հստակեցնել դասավանդվող բոլոր առարկաների կշիռն ուսումնական գործընթացում, սահմանել հավասարակշռված հարաբերակցություն ուսանողի լսարանային և արտալսարանային աշխատանքների միջև:

2. Կատարելագործել ուսանողի գիտելիքի գնահատման մեթոդաբանության հայեցակարգը՝ ներառյալ գնահատականների վերանայման և բողոքարկման մեխանիզմները:
3. Վերանայել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը, այն համապատասխանեցնելով ECTS-ի ուղենշային փաստաթղթին, ամբողջական անցում կատարել ուսուցման և գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգին:
4. Վերանայել ՄԿԾ-ների դասավանդման մեթոդները՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ:
5. Բարձնացնել կրթության որակը, շարունակաբար արդիականացնելով և միջազգայնացնելով կրթական ծրագրերը, ապահովել ուսանողների շարժունությունը:

### **Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Ուսումնական պլաններում տեսական և գործնական հմտությունների ապահովում, ՄԿԾ վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրեր:
2. Գիտելիքների գնահատման, վերանայման և բողոքարկման կարգ:
3. Գիտելիքների բազմագործոնային գնահատման կարգ:
4. Կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան դասավանդման մեթոդներ
5. Ուսանողների ակադեմիական շարժունության կանոնակարգ

### **Խնդիր 2.3. Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ:**

#### **Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Կատարելագործել ՊԴ կազմի համալրման մեխանիզմները:
2. Ապահովել օտար լեզվի իմացությամբ երիտասարդ որակյալ կադրային ներուժի հոսքը համալսարան:
3. Նպաստել ՊԴ կազմի երիտասարդացմանը՝ սկսնակ դասախոսների, երիտասարդ բժիշկ գիտնականների, շրջանավարտների ներգրավման միջոցով:
4. Իրականացնել ՊԴ կազմի պարբերաբար գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստվածության, դասախոսական աշխատանքի հմտության, դասավանդման մեթոդիկայի և փորձի:
5. Մշակել ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատման չափանիշներ և դրանց ներդրման գործում մեխանիզմներ:

### **Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Դասախոսական կազմի ձևավորման և ազատման լրամշակված կանոնակարգ:
2. Օտար լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմ (առնվազն 50%):
3. Դասախոսական կազմի միջին տարիքը առնվազն 45 տարեկան:
4. ՊԴ կազմի վարկանշավորման գնահատման կարգ:
5. Դասախոսի աշխատանքի որակի գնահատման հարցաթերթիկի առկայություն և իրականացված հարցումների արդյունքներ:

**Խնդիր 2.4. Բարձրացնել համալսարանում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:**

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթաց՝ շրջանավարտների և գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի համակարգեր:
2. Չարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման, կրթական գործընթացի որակի բարձրացման օժանդակության ծառայությունները:
3. Ընդլայնել համագործակցությունը հանրապետության բժշկական քոլեջների և դպրոցների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր:
4. Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելություն և հոսքն ապահովելու ուղղությամբ:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Շրջանավարտների էլեկտրոնային բազա, գրանցված շրջանավարտների միություն:
2. Ուսանողների բավարարվածության աճ տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման օժանդակ ծառայություններից:
3. Համագործակցության գործող առնվազն 3 պայմանագրեր:
4. Մշակված և հրատարակված ուսանողի ուղեցույց:

### 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**Համալսարանում ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող որակյալ ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ**

**Խնդիր 3.1.** Համալրել և կատարելագործել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց, գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը:
2. Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթաց:
3. Լսարանները, կաբինետները և լաբորատորիաները համալրել համակարգիչներով, պրոյեկտորներով, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գործընթացը խթանող այլ միջոցներով:
4. Ընդլայնել համալսարանի գիտաբժշկական կենտրոնի տարածքը, համալսարանի ուսումնասօժանդակ 2-րդ մասնաշենքը տրամադրել գիտաբժշկական կենտրոնին և իրականացնել վերանորոգման և կահավորման աշխատանքներ:
5. Պարբերաբար արդիականացնել տեխնիկական ու տեղեկատվական միջոցները, բարձրացնել համացանցի արագությունը և ապահովել ազատ մուտք համացանց:
6. Ապահովել գրադարանային գործունեության զարգացումը, համալրել գրադարանի նյութատեխնիկական բազան համակարգիչներով, ինտերնետ կապով, Էլեկտրոնային գրքային ֆոնդերը:
7. Ապահովել գրադարանի և ներքին շահակիցների փոխադարձ կապը, վերհանել գրադարանից օգտվողների կարիքները, կատարել հարցում գրադարանի ծառայությունների որակի վերաբերյալ:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Առկա ռեսուրսների գնահատման արդյունքում արդիականացված նյութատեխնիկական բազա:
2. Արդիականացված ուսումնական մասնաշենք, լսարաններ և լաբորատորիաներ
3. Ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված կրթական միջավայր:
4. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման բարելավված պայմաններ:
5. Համացանցից օգտվելու լայն հնարավորություն:
6. Գրադարանային ռեսուրսներից օգտվելու մատչելիություն:
7. Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքներ:

**Խնդիր 3.1. Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում:**

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Բյուջեն պլանավորելիս հաշվի առնել առաջիկա տարիների ընդունելության մոտավոր դինամիկան:

2. Իրականացնել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման գործընթաց::
3. Մշակել ՊԴ կազմի աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմներ՝ ըստ ուսումնական, գիտահետազոտական ծանրաբեռնվածության:
4. Մշակել և ներդնել ուսանողների ֆինանսական աջակցության համակարգ:
5. Ուսանողների առաջադիմությունը և ուսանողական ակտիվությունը գնահատելու և խթանելու համար սահմանել անվանական կրթաթոշակներ:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Ֆինանսական միջոցների նպատակային հատկացումներ համաձայն ռազմավարական նպատակների և ուղղությունների:
2. Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրերի իրականացում:
3. ՊԴ կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաստատված հաշվարկի նորմեր:
4. Ուսանողների առաջադիմության խրախուսման հաստատված կարգ:

#### 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Չարգացնել ուսանողներին մատուցվող ծառայությունները, խթանել դիմորդների հոսքը համալսարան և ուսանողական կազմակերպությունների աշխատանքները**

**Խնդիր Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:**

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Ակտիվացնել ՈւԽ աշխատանքները, խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները, միջոցառումների կազմակերպումը դարձնել բազմաբնույթ:
2. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը համալսարանի կառավարմանը:
3. Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում:
4. Նպաստել ուսանողների կրթական, գիտական, բարոյական, հոգևոր և մշակութային աշխարհայացքի զարգացմանն ու հարստացմանը:
5. Խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները:
6. Իրականացնել միջոցառումներ, ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:
7. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Արտալսարանային միջոցառումների ակտիվացում (արձանագրություններ):
2. Կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածություն:
3. Մկծ-ների մշակման և վերանայման աշխատախմբերում ուսանողների առկայություն:
4. Մկծ անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռքբերում:
5. Ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական միջոցների հատկացում (արձանագրություններ):
6. Ուսանողների բազմակողմանի զարգացվածության վերաբերյալ հարցումներ մասնագետների շրջանում:
7. Ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովում:



## 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

**Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները համալսարանական և ծրագրային մակարդակներում**

**Խնդիր 5.1. Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը եվրոպական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում:**

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Իրականացնել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման արդյունավետ քաղաքականություն և մեխանիզմներ, ընդլայնել և ամրապնդել համագործակցությունը եվրոպական և Իրանի գիտակրթական կառույցների հետ:
2. Միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ իրականացնել համատեղ գիտակրթական միջոցառումներ:
3. Նպաստել ուսանողների և ՊԴ կազմի շարժունության ձևերի կիրառմանը, ընդլայնելով միջազգային կրթական գիտաժողովներին, սեմինարներին և այլ կրթական ծրագրերին մասնակցությունը:
4. Պայմանավորվածություն ձեռք բերել արտերկրյա գործընկեր գիտակրթական կազմակերպությունների հետ ՊԴ կազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպման և ուսանողների փոխանակման շուրջ:
5. Ապահովել հրավիրյալ դասախոսների ներգրավումը գիտաուսումնական գործընթացում:
6. Ստեղծել հիմքեր օտար լեզվով ՄԿԾ-ների ներդրման համար, կազմակերպել օտարերկրյա ուսանողների ընդունելություն:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

1. Կնքված համագործակցության առնվազն 3 պայմանագիր:
2. Կազմակերպված առնվազն 2 միջազգային գիտակրթական միջոցառումներ:
3. ՊԴ և ուսանողների շարժունության վերաբերյալ արձանագրություններ համագործակցող պայմանագրերի շրջանակներում:
4. Գործող համաձայնագրեր և պայմանագրեր:
5. Կրթության որակի բարելավում, համեմատական վերլուծություն:
6. Նախապատրաստական քայլերի և կատարված աշխատանքների հաշվետվություններ

**Խնդիր 5.2. Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը:**

**Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.**

1. Ակտիվացնել համալսարան-հասարակություն կապը, նպաստել բուհի վարկանիշի բարձրացմանը՝ ընդլայնել համագործակցությունը տպագիր և էլեկտրոնային մամուլի հետ՝ ներկայացնել համալսարանի առանձնահատկությունները և ձեռքբերումները:

2. Պատրաստել տեսաֆիլմեր՝ համալսարանի գործունեությունը լուսաբանելու նպատակով, մասնակցել կրթական ցուցահանդեսներին, ներկայացնել համալսարանի գործունեությունը և կրթական ծրագրերը:
3. Համալսարանի կրթական առավելությունները հանրությանը հասանելի դարձնելու նպատակով, ՉԼՄ-ներում և համացանցային կայքերում տեղադրել համալսարանին վերաբերող գովազդային նյութեր և դրանք դարձնել առավել հասանելի հանրությանը:
4. Համալսարանում ձևավորել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման արդյունավետ մեխանիզմներ և գործիքներ, կանոնավոր դարձնել համալսարանի շրջանավարտների հետ հանդիպումները:
5. Իրականացնել ընդունելության ուղղությամբ նպատակային համագործակցություն հանրապետական և արտասահմանյան բժշկական քոլեջների հետ, կնքել համաձայնագրեր:

### ***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Համալսարանի մասին տեղեկատվության տարածում և հանրային իրազեկում:
2. Համալսարանի լուսաբանում տեսաֆիլմերի և բուկլետների միջոցով:
3. Համալսարանի կրթական գործունեության մասին տեղեկատվության տարածում:
4. Հետադարձ կապի ապահովման մշակված մեխանիզմներ և գործիքներ:
5. Կնքված առնվազն 2 համաձայնագրեր:

## 6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը

**Խնդիր 6.1. Նպաստել Համալսարանում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:**

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Նպաստել ՊԴ կազմի մասնագիտական որակների կատարելագործմանը:
2. Կազմակերպել գիտամեթոդական սեմինարներ ՊԴ կազմի և ուսանողների համար՝ դրանց արդյունքում հրատարակելով գիտական հոդվածների ժողովածուներ:
3. Ստեղծել պայմանագրային հենք արտասահմանյան գիտաբժշկական կառույցների և համալսարանների հետ դասախոսների վերապատրաստումների կազմակերպման համար:
4. Բարելավել դասախոսների գիտահետազոտական գործունեության իրականացման պայմանները:
5. Չարգացնել և արդիականացնել ուսումնական և լաբորատոր պայմանները համապատասխանեցնելով կրթական և հետազոտական կարիքներին:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում:
2. ՊԴ կազմի և ուսանողների մասնակցությամբ գիտամեթոդական սեմինարների մասնակցության արձանագրություններ:
3. Առնվազն 2 միջազգային մասնագիտական վերապատրաստում:
4. Գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու ժամանակակից պայմաններ, իրականացված առնվազն 4 աշխատանք:
5. Հետազոտությունների արդյունքների ներդրում կրթական գործընթացում:

**Խնդիր 6.2. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Արդիականացնել համալսարանի հետազոտությունների ռազմավարական ուղղությունները՝ ապահովելով կապը ուսումնառության հետ:
2. Համագործակցել արտասահմանյան գործընկեր համալսարանների և գիտաբժշկական կազմակերպությունների հետ՝ ներգրավելով նրանց լավագույն մասնագետներին թեմատիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ դասավանդման ծրագրերում և սեմինարներում:
3. Նախաձեռնել ուսանողների, շրջանավարտների և երիտասարդ գիտնականների գիտաժողովների անցկացումը, վերականգնել և ակտիվացնել համալսարանի գիտական ներուժի ներգրավվածությունը գիտահետազոտական գործընթացում:

4. Մշակել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոփոխապակցման մեխանիզմներ:
5. Կազմակերպել ուսանողական համալսարանական և միջհամալսարանական սեմինարներ և գիտաժողովներ:
6. Նպաստել հանրապետական և միջազգային վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում համալսարանի դասախոսների հոդվածների և ուսումնասիրությունների հրատարակությանը:

### ***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Հետազոտությունների արդյունքների կիրառում կրթական գործընթացում:
2. Արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համատեղ միջոցառումների կազմակերպման օրացույցային պլան (արձանագրություններ, հաշվետվություններ):
3. Գիտաուսումնական գործունեության ակտիվացում, շրջանավարտների հետադարձ կապի ապահովում:
4. Համալսարանի ՌԾ-ի գերակա ուղղությունների իրականացում:
5. Առնվազն 3 գիտաժողովների հաշվետվություններ և արձանագրություններ:
6. Համալսարանի դասախոս-գիտնականների աշխատանքների տպագրությունների թվաքանակի աճ:

## 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացը համապատասխանեցնել բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական և ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին և ուղենիշներին:

**Խնդիր Կրթական համակարգի որակի ապահովում:**

***Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.***

1. Համալսարանում ձևավորել որակի ներքին ապահովման մշակույթ և նպաստել համակարգի զարգացմանը:
2. Մշակել և զարգացնել կրթության որակի շարունակական բարելավման քաղաքականությունն ու ընթացակարգերը:
3. Որակի ներքին ապահովման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդլայնել համագործակցությունը հանրապետական այլ բուհերի նմանօրինակ կառույցների հետ:
4. Ապահովել որակի ներքին ապահովման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ բոլոր գործընթացներում:
5. Որակի ներքին ապահովման գործընթացներում շահակիցների ակտիվ ներգրավվածություն:
6. Ինստիտուցիոնալ ինքնազննատու կատարելու անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***

1. Հաստատված Որակի ներքին ապահովման ձեռնարկ:
2. Որակի ապահովման հանձնաժողովի կանոնադրություն, ՈԱ քաղաքականություն:
3. Որակի ներքին ապահովման ուղղությամբ սեմինար խորհրդակցությունների և միջոցառումների հաշվետվություններ և արձանագրություններ:
4. Հաշվետվությունների և արձանագրությունների առկայությունը Համալսարանի պաշտոնական կայքում:
5. Վերանայված հանձնաժողովների կազմ:
6. Ինքնավերլուծության զեկույց: